

պաստվոր ճաշերի եփելը, այդ թվում կաղամբով թթուն, որը գրեթե ամբողջ ձմեռվա ընթացքում կերել էին ու ձանձրացել:

Մեծ պասի վերջին շաբաթը լինում էր դարնանամուտին: Արթնանում էր բնությունը, ինչպես նաև ձմռանը քուն մտած օձերը: Եվ ահա, յուրաքանչյուր տուն այդ օրը, պարտադիր, պիտի թթու եփեր, իսկ եթե որե՛կ մեկի թթուն վերջացել էր, որը հազվադեպ էր պատահում, այդ դեպքում հարեաններից էին խնդրում ե բոլոր տանեցիները այդ վերջին թթուն պիտի ուտեին, որպեսզի տարվա ընթացքում օձը իրենց չխայթեր, իսկ եթե մեկն ու մեկը թթու չէր ուտում, կարծում էին, թե նրա կյանքը մնում էր վտանգված:

Ծ Ի Ս Ա Կ Ա Տ Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

Շոռ րիթ ուտելը—Նոր Բայազետում ամեն տարի ս. Սարգսի առնին աղի բլիթ էին պատրաստում: Երեկոյան ամուրի երիտասարդները, տղա թե աղջիկ, ուտում էին մեկական րիթ ու առանց ջուր, թեյ, թան խմելու քնում: Գիշերը, երազում, երբ խիստ ծարավում էին, ե որե՛կ մեկը ջուր էր ապրիս, նրան էլ համարում էին իրենց ընտրյալը: Առավոտյան արթնանում էին ու յուրաքանչյուրը պամում, նկարագրում էր, թե ով է իրեն ջուր տվել. ուրախսում էին, եթե իրենց սրախ ուզածն է եղել ջուր տվողը, իսկ եթե ջուր ավոռ չէր լինում, խիսա հուսահատվում էին, կարծելով որ այդ տարի էլ չեն ամուսնանա:

Տընդեզ (այսպես ընդ առաջ)—Փեարվարի 14-ին Նոր Բայազետում տոնում էին տրնդեզը՝ տյառն ընդ առաջը:

Երեկոյան ժամերգությունից հետո, եկեղեցուց զոռչությամբ ու հանդիսավորությամբ վառվող մոմ էին բերում տուն, որ այդ մոմով վառեն իրենց տրնդեզը (մի խուրձ խոտ, որը նախօրոք պաարաստել էին): Տրնդեզը վառելուց հետո բոլոր տնեցիները դուրս էին դալիս ու շրջապատում խարուկը, երզում ու պարում նրա շուրջը, իսկ ում տանը որ նորահարս կար, նրան էլ դուրս էին բերում, յոթ անգամ պտտեցնում խարուկի շուրջը, բոցերի վրայից երեք անգամ ցատկել տալիս: Զենք ունեցող տղամարդիկ կրակում էին:

Երբ խարուկի կրակը սկսում էր մարել, եղանով կամ մի ամանով կրակ էին վերցնում ու առնում աան շուրջը պտտեցնում, այնուհետե բարձրանում էին տանիքն ու այնտեղից մոխիր թափում հերթից, որից հետո կրակը տանում էին դոմը, հավանոցը:

Այս ծիսակատարությունը արվում էր, որ օ-

Մտկալիսին հաւեն ինչ պտի տան ուտա— Հղի կանանց (որոնց Նոր Բայազետում մտկալիս են ասում), պետք է տային ուտելու, ինչ որ նրանք ցանկանում էին, որպեսզի երեխայի աչքը ծուռ չլիներ, կամ մի այլ պակտություն չունենար:

Եթե երեխան ծնվում էր ե ունենում էր որե՛կ ֆիզիկական պակասություն, սկսում էին մեկ առ մեկ վերհիշել, թե երեխայի մայրը հղիության ժամանակ, որտեղ ինչ է ուղեցել ուտել, ռայց չի կերել. դրանով էլ պատճառարտնվում էր երեխայի պակասությունը:

Ջախը միջա վառ մնա. հարսին տրնդեզի շուրջը ման էին ածում, որ հարսը համեստ լինի ու իր ղցավն ու շոռը թափի տրնդեզի կրակի վրա, տանը ե աանեցիներին շար աչք չկալի, բերքը առաա լինի, կովերը, ոչխարները առատ կաթ տան, հավերն էլ շատ ձու ածեն:

Հաւսին առն ուտելը—Նորահարսին առաջին անգամ, երբ ամուսնու տուն էին բերում, ամուսնու րարեկամներից մեկը հարսի պիղն էր դնում մի տղա երեխա, որ նորահարսի առաջնեկը տղա լինի: Հարսին կեսրանց աանը առաջին անգամ կերակրում էին մածոնով, որ ոչ մի հարցում սեներես չլինի:

Պեսալի տան շեմն աեցնելը—Երբ հարսն ու փեսան դհոլ-դուռնայի ուրախ նվաղի տակ մոտենում էին փեսայի տան շեմին, ազարբաշին՝ ամուրիների ավաղը, սուրը հանում ու պահում էր հարսի ու փեսայի գլխավերեք, որ նրանք շեմն անցնեն սրի տակով, որով շարքերին, սատանաներին չէին թողնում հարսանքատուն մտնել (նետ դնելու տարրերակն է, տե՛ս տըլմաների բաժինը):

Նորասպակաների շեմն անցնելու պահին երկու ախսե (քրեղան) էին դնում հարսի ու փեսայի ոտքերի աակ, նրանք էլ ոտքով խփում ու ջարդում էին ախսեները, որով շարը խափտնում էին:

Ազլաղիզ—Նոր Բայազետում սովորություն կար մեծ պասի տոաջին օրվանից աղլադիզ կախել տան օճորքից: Դա մի սոխի դուլիս էր, որի շուրջը խրում էին յոթ հաա հավի փետուր, որ մեծ պասի յոթը շարաթն էր նշանակում:

Բարիկենդանի երեկոյան տան բոլոր անդամները ճոխ ընթրիք էին վսյելած լինում. օրվա բոլոր մսեղեն, յուղեղեն ե մյուս տեսակի ընաիր խորտիկները ուտում էին ու պառկում քնելու, որ

տոսովորական արթնանան ու տեսնեն, թե իզասն
հկել է ու ազլադիդն էլ հետը բերել:

Դերդաստանի մեծր տոալոայան շուտ վեր էր
կենում ու կախում ազլադիդը: Նա յոթ շտրտթ
խստորեն պիաի հետեեր, որ ոչ ոք յուղեղեն
(խոսքը կենդանական յուղի մասին է), մսեղեն,
ձկնեղեն, պաթնեղեն ու ձու շուտիւ Պետք է ու-
տեին միայն բուսական յուղ, շորացրած րանջա-
րեղեն (մեծ պասը ձմեռվա ամիսներին է լինում)
շորացրած ավելուկ, թթու կաղամբ, ձավար և
տլին:

Ազլադիդը երկու նպատակի էր ծառայում: Ցու-
րաքանչյուր շաբաթ օրը մի փետուր հանում էին
ադլադիդի վրայից. այսպիսով ազլադիդը դառ-
նում էր մի ուրույն շաբաթացույց ոամիկ ժողո-
վրդի համար: Սոխը, որը ալդեն ծիւեր էր տը-
ձակել, պարսադիր օգտադործում էին գատկվա
կերակուրների մեջ, որպես տըմս: Երկրորդ նպա-
տակն էլ այն էր, որ ազլադիդը յոթ շարաթների
րնթացքում լինում էր պահակ. հսկում էր, որ
ընտանիքի անդամներից, հատկապես երեխանե-
րից, որեէ մեկը պասը դադտնաբար շուտեր. հա-
վատում էին, որ ազլադիդը ամեն ինչ աեսնում է:
Ազլադիդը թելով կախված էր լինում երդիկից
կամ պատուհանի աոտստողից: Օդի ամենափոքը
տատանումից շարժվում էր, իբրև թե ասում էր,
որ մեկն ու մեկը պասը կերել է: Եթե այդպիսին

լինում էր, իսկույն խոստովանում էր: Եթե չխոս-
տովաներ, ազլադիդը նրա աչքերը կհաներ:

Մեռելի նոր «տան» արժեքը—ննջեցյալի հա-
մար գերեզման փորելուց և վերջացնելուց հետո մի
քանի մետաղյա դրամներ էին նետում դերեղմանի
հատակը: Դրամի չափը պայմանավորված էր մե-
ռելի կարողությամբ: Այդ դործողությունը նշա-
նակում էր, թե նոր տուն դնեցին ննջեցյալի հա-
մար:

Ննջեցյալի հաւաւ աուն վարձելը—Երրեմն,
գերեզման փորելիս հանդիպում էին մի այլ՝
նախկինում թաղված ննջեցյալի: Որպեսզի դերեղ-
մանի մեջ հին ու նոր ննջեցյալները խաղաղ
«ապրեն», նոր ննջեցյալի աերերը պեաք է մի քա-
նի մետաղյա (թղթաղրամը չէր ընդունվում)
դրամներ նետելն այդ հին դերեղմանը, որպես
տան վարձ՝ նախկին մեռելին:

Ննջեցյալի գերեզմանին երեք բուռ հոգ լցնե-
լը—Երր ննջեցյալի դադաղը իջեցնում էին դե-
րեղման, բուռը հուղարկավորները մոտենում էին
գերեղմանափոսին ու երեք բուռ հոգ դցում մեռե-
լի դադաղի վրա: Տուն վերադաոնտիս էլ երեք
բուռ ջրով ձեռքերը լվանում էին: Դրանով հոդ ա-
ծողները «ցավն ու շոռը» հողի հետ տալիս էին
մեռելին: Իսկ երեք բուռ ջրով էլ լվանում էին.
որ, մաքրվեն «ցավից ու շոռից»: